



Հաճախորդը Բանկի հետ կնքել է ժամկետային ավանդի պայմանագիր՝ Բանկի կողմից հրապարակված պայմաններով: Ավանդի գումարը ստանալու պահանջով Հաճախորդը դիմել է Բանկ՝ նպատակ ունենալով ձեռք բերել ԱՄՆ դոլար տվյալ օրվա փոխարժեքով: Բանկը նույն օրը ավանդը չի տրամադրել, այլ տրամադրել է հաջորդ օրը: Նույն օրը Հաճախորդը փոխարկել է վերոնշյալ գումարը, սակայն կրել է նյութական վնաս՝ փոխարժեքի բարձր լինելու պատճառով: Վնասը հատուցելու մասին Բանկին ուղղված պահանջի մերժումը ստանալուց հետո Հաճախորդը դիմել է Հաշտարարին՝ խնդրելով հարթել առաջացած վեճը և վերականգնել իր խախտված իրավունքները:

Ըստ Բանկի՝ պայմանագրի խզման արդյունքում վերջինս ավանդի գումարը հաշվեգրված տոկոսներով ամբողջությամբ վերադարձրել է Հաճախորդին նույն օրը, երբ նա դիմել է Բանկին: Սրանով իսկ Բանկը հերքել է պայմանագրի խզման դեպքից մեկ օր առաջ Հաճախորդի՝ Բանկ ներկայանալու և ավանդի գումարը պահանջելու վերջինիս կողմից ներկայացված փաստարկը: Ըստ Բանկի՝ վերջինս պատշաճ կերպով կատարել է ավանդային պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր բոլոր պարտականությունները:

Հաշտարարը խնդիրը պարզելու նպատակով անցկացրել է բանավոր լսումներ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ Հաճախորդը պայմանագրի խզման օրվանից մեկ օր առաջ գնացել է Բանկ և պահանջել է ավանդի գումարը: Սակայն Բանկի դրամարկղում համապատասխան միջոցների բացակայության պատճառով Բանկը հրաժարվել է այդ գումարը վճարելուց: Ըստ Բանկի, եթե Հաճախորդի կողմից պահանջվող ավանդի գումարը մեծ է, հաճախորդներին, որպես կանոն, Բանկը խնդրում է նվազագույնը մեկ օր առաջ ծանուցել ավանդը հետ պահանջելու վերաբերյալ:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է, որ ավանդը ենթակա է վերադարձման քաղաքացու առաջին իսկ պահանջով, Հաշտարարը նաև պարզել է ձևավորված գործարար շրջանառության սովորույթը ՀՀ բանկային համակարգում: Բանկերի ներկայացրած պատասխաններից պարզ է դարձել, որ տվյալ դեպքում Հաճախորդի կողմից պահանջած գումարը մեծ չէր, և այդ գումարի չափով կանխիկ միջոցներ Բանկերը միշտ ապահովում են իրենց մասնաճյուղերում: Միայն առավելապես մեծ գումարների ավանդների դեպքում Բանկերը խնդրում են ավանդատուներին զգուշացնել բնական առնվազն մեկ օր առաջ՝ մասնաճյուղում բավարար կանխիկ ապահովելու համար:

Վերոնշյալը ներկայացնելով կողմերին՝ Հաշտարարը կոչ է արել գտնել հաշտություն եզրեր: Այս ամենի արդյունքում Բանկը որոշել է մասնակիորեն բավարարել Հաճախորդի պահանջը:

Այսպիսով, կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն և գործը փակվել է հաշտությամբ: